# Վորլդ Վիժն Հայաստանի 2019թ.-ին գործունեության համառոտ հաշվետվություն

հունիս, 2020

Վորլդ Վիժնն աջակցում է յուրաքանչյուր 7-րդ երեխային Հայաստանում

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վորլդ Վիժնը ծառայում է աշխարհի 100-ից ավել երկրներում՝ նպաստելով միլիոնավոր երեխաների և նրանց ընտանիքների բարեկեցությանը: Վորլդ Վիժնը Հայաստանում իր գործունեությունն սկսեց 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո՝ տրամադրելով հումանիտար աջակցություն: Ապա մարդասիրական օգնությանը զուգահեռ՝ Վորլդ Վիժնը սկսեց իրականացնել արդեն զարգացման ծրագրեր: Այսօր Վորլդ Վիժն Հայաստանն ունի 15 գրասենյակ, և կազմակերպության զարգացման ծրագրերից անմիջականորեն օգտվում է **110000** երեխա երկրի ողջ տարածքում:

1. Վորլդ Վիժնն այսօր աջակցում է յուրաքանչյուր 7-րդ երեխային:
2. 2001-ից առ այսօր **50.000** երեխա մասնակցել է Վորլդ Վիժնի ամառային ճամբարներին:
3. Շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է վերադարձել **586** երեխա:
4. Ամենօրյա աշխատանք է իրականացվում ծայրահեղ աղքատ **4000** ընտանիքների հետ:
5. Կազմակերպության միջոցներով հիմնվել են **70** ինժեներական լաբորատորիաներ, որտեղ ուսանում են **2000**-ից ավելի աշակերտ:
6. Հայաստանի **70** համայնքներում կազմավորված արտադրողների **73** խմբերն արձանագրել են եկամտի կայուն աճ:




## Տարիներ ի վեր Վորլդ Վիժն Հայաստանի գերակա ուղղություններն են՝

- ✓ Երեխաների տարիքին համապատասխան զարգացում և առողջություն,
- ✓ Երեխաների իրավունքների բազմակողմանի պաշտպանություն,
- ✓ Երիտասարդների հզորացում եւ զբաղվածության ապահովում,
- ✓ Ընտանիքների տնտեսական հզորացում և աղքատության փուլային հաղթահարում:

2019թ.-ի մայիսի 6-ին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությունը (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն) հիմնադրեց «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամը:

## 2019 Թ.-ԻՆ ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԸ

### «Աղքատության փուլային հաղթահարում»

Վորլդ Վիժն Հայաստանն աշխատում է ավելի քան 4000 առավել խոցելի ընտանիքների և նրանց երեխաների հետ: Այս ընտանիքների օրական եկամուտը 1.5 ԱՄՆ դոլարից ցածր է: Վորլդ Վիժնն աջակցում է ընտանիքներին՝ բարելավելու նրանց սոցիալ-տնտեսական վիճակը և պաշտպանելու երեխաների իրավունքները:

Ընտանիքների հետ աշխատանքն իրականացվում է Վորլդ Վիժնի փորձառու սոցիալական աշխատողների օգնությամբ: «Աղքատության փուլային հաղթահարում» մոտեցումը ենթադրում է իրար հաջորդող, բազմասեկտորալ միջամտություններ, որոնք օգնում են ծայրահեղ աղքատ ընտանիքին դուրս գալ աղքատությունից: Վորլդ Վիժնի աջակցությունը ներառում է՝

- սոցիալական աշխատանք ընտանիքների հետ,
- գումարային աջակցություն՝ ամենահրատապ կարիքների համար,
- մասնագիտական վերապատրաստումներ,
- ծնողավարման հմտությունների ուսուցում,
- աջակցություն աշխատանք գտնելու հարցում:

Մինչ օրս իրականացված սոցիալական աշխատանքի և «Աղքատության փուլային հաղթահարում» մոտեցման կիրառման արդյունքում՝

- ծրագրին մասնակցող ընտանիքների 48%-ը հաղթահարել է ծայրահեղ աղքատությունը,
- ընտանիքների 90%-ի մոտ աճել է տարեկան եկամուտը:

Ծրագրի շրջանակներում Վորլդ Վիժնը համագործակցում է՝

- **«Իմ քայլը» հիմնադրամի հետ**. 2019թ.-ից 18 ընտանիքի համար մշակվել են անհատական զարգացման պլաններ և ընտանիքներին տրամադրվել է բազմաբնույթ աջակցություն: «Իմ քայլը» հիմնադրամը և Վորլդ Վիժն Հայաստանը այս ծրագիրն իրականացնում են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապրող 30 բարձր խոցելիություն ունեցող ընտանիքների հետ:
- **Խնայբանկերի միջազգային հիմնադրամի հետ**. համագործակցության արդյունքում Երևանում և մարզերում կազմակերպվել են մի շարք դասընթացներ և մրցույթներ, որոնց նպատակն է ծայրահեղ աղքատ ընտանիքներին սովորեցնել ճիշտ կառավարել ֆինանսներն ու խնայել: Դասընթացների այս փաթեթն այսուհետ Վորլդ Վիժն Հայաստանը կիրառելու է ծրագրում ներառված բոլոր ընտանիքների հետ աշխատանքում:
- **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ**. կառավարության հաստատած ծրագրի համաձայն՝ 1000 ընտանիք դարձել է նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված համակարգի շահառու: Ծրագրի հիմքում Հայաստանում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և Վորլդ Վիժն Հայաստանի հետ համատեղ իրականացվող՝ «Նպաստ +» և «Աղքատության փուլային հաղթահարման» ծրագրերի հաջողված փորձն է:

### «Ընտանեկան միջավայր և համայնքային ծառայություններ Հայաստանի երեխաների համար» ծրագիր

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագիրը նպաստում է Հայաստանի երեխաների համար որակյալ համայնքահեն խնամքի ծառայությունների ստեղծմանը և աջակցում է ՀՀ կառավարությանը իրականացնել ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան բոլոր երեխաների համար:

Ծրագիրն իրականացվում է Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ:

**Ծրագիրը հետապնդում է երկու կարևոր նպատակ՝**

- Ստեղծել կանխարգելման արդյունավետ մեխանիզմ՝ համապատասխան օրենսդրական ակտերի վերաբերյալ առաջարկների ներկայացման, որակյալ և կայուն այլընտրանքային խնամքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելուն ուղղված աշխատանքների, այլընտրանքային խնամքի համար չափորոշիչների մշակման և ներկայացման միջոցով
- Հինգ մարզերում 13 խնամքի հաստատությունների վերակազմակերպում՝ այլընտրանքային որակյալ ծառայություններ տրամադրելու նպատակով, որի արդյունքում դրանցում խնամք ստացող բոլոր աղջիկ և տղա երեխաները հնարավորության դեպքում կմիավորվեն իրենց կենսաբանական ընտանիքներին, կամ կստանան ընտանեկան այլ տիպի խնամք:

Արդյունքներ՝

- 308 երեխա հաստատություններից վերադարձել են ընտանիք և հաճախում են իրենց համայնքի հանրակրթական դպրոց:
- 20 ընտանիքներ ներառված են աղատության փուլային հաղթահարում ծրագրում:
- 663 ուսուցիչներ և մասնագետներ Շիրակի մարզում վերապատրաստվել են ներառական կրթության վերաբերյալ թեմաներով:
- 9 համայնքային ծառայություններ են ներդրվել:
- Երեխաների պաշտպանության ոլորտի 107 դերակատար կանխարգելման վերաբերյալ վերապատրաստում է անցել:
- Քարտեզագրվել են Հայաստանում առկա ծառայությունները, ինչպես նաև մշակվել և ՀՀ ԱՍՀՆ է ներկայացվել երեխաներին մատուցվող ծառայությունների ստանդարտներ:

## «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիր

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրի նպատակն է խթանել համայնքի սոցիալական ծառայությունների ներդրումը Հայաստանում՝ տեղական ինքնակառավարման համակարգում համայնքի սոցիալական աշխատողի հաստիքի ներդրման միջոցով, ինչպես նաև զարգացնել համայնքների կարողությունը՝ հայտնաբերելու, կանխելու և հասցեագրելու իրենց սոցիալական խնդիրները:

Ծրագիրը աջակցում է համայնքի սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանը, կարողությունների զարգացմանը, ինչպես նաև սոցիալական ոլորտի տեղական և տարածքային բոլոր դերակատարների համագործակցությանը Հայաստանում:

Ծրագրի շրջանակներում՝

- 86 համայնքում այսօր աշխատում է 91 (71 կին, 20 տղամարդ) համայնքի սոցիալական աշխատող
- 6581 առավել խոցելի ընտանիքների ավելի քան 29000 անդամ ստացել է սոցիալական աշխատողի խորհրդատվություն և աջակցություն:
- 1151 ընտանիքների հետ մշակվել և իրականացվել են ընտանիքների զարգացման ծրագրեր: Համայնքային սոցիալական աշխատողները ակտիվ ներգրավված են հաստատությունից տուն վերադարձած երեխաների և նրանց ընտանիքների վերամիավորման և այդ ընտնիքների բարեկեցության մշտադիրկման իրականացման գործընթացում:
- Մշակվել է համայնքի սոցիալական աշխատողի հեռավար ուսուցման հատուկ դասընթաց՝ Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ և 2019 թվականին այս

դասընթացն ավարտել և հատուկ հավաստագիր է ստացել 19 համայնքային սոցիալական աշխատողներ:

- 61 համայնքային սոցիալական աշխատողներ մասնակցել են վերապատրաստումների գործող օրենսդրության, սոցիալական ծառայությունների ինստիտուտի կարևորության, սոցիալական դեպքերի վարման մեթոդաբանության և գործիքների վերաբերյալ:
- Ծրագիրը աջակցել է նաև Երևան քաղաքի սոցիալական բարեփոխումների իրականացմանը, որի արդյունքում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում նախատեսվում է ներդնել համայնքային սոցիալական աշխատողների հաստիքներ:

## «ԵՄ-ն հանուն երիտասարդության - ՍԵՅ ԵՍ. հմտություններ աշխատանքի համար» ծրագիր

Այս ծրագիրը մշակվել է ԵՄ-ն հանուն երիտասարդության նախաձեռնության շրջանակներում, Վորլդ Վիժն Գերմանիայի, Հայաստանում և Վրաստանում գործող Վորլդ Վիժնի գրասենյակների, ինչպես նաև Գլոբալ զարգացումներ հիմնադրամի հետ սերտ համագործակցության արդյունքում: Ծրագրի նպատակն է նպաստել գյուղական համայնքներում ապրող երիտասարդների գործազրկության խնդիրների հասցեագրմանը և եկամտի աղբյուրների ստեղծմանը:

Ծրագրի թիրախ խումբ են հանդիսանում հատկապես սահմանափակ հնարավորություններ ունեցող 15-ից 35 տարեկան կանայք և տղամարդիկ: Ծրագիրը նպատակն է աջակցել նրանց աշխատանք գտնելու կամ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու մեջ:

Ծրագրի շրջանակներում՝

- 102 ուսանող ավարտել է գյուղատնտեսության կարճաժամկետ դասընթացները:
- 150 երիտասարդներ դարձել են «ՍՔԱՅ» երիտասարդական ոչ ֆորմալ ուսուցում տրամադրող ակումբների անդամ: Այստեղ երիտասարդները սովորում են ակտիվ քաղաքացիության, առաջնորդությանն և սոցիալական ձեռնարկատիրության հիմունքները:
- Հիմնվել է 9 ձեռնարկություն:
- 120.000-ից ավել մարդ օգտվել է «Քան» ակադեմիայի առցանց ուսուցման հարթակում թարգմանված բովանդակությունից:
- Մոտ 150 երիտասարդ մասնակցել է անգլերենի և SS դասընթացներին:

## «Կայուն լուծումներ տեղահանված և կոնֆլիկտից տուժած անձանց ինտեգրման համար» ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել տեղահանված և կոնֆլիկտից տուժած անձանց համար  աշխատանքի և ապրուստի միջոցների կայուն հասանելիությանը: Երկամյա ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Պետքարտուղարության Բնակչության, փախստականների և միգրացիայի գրասենյակի կողմից:

Ծրագիրը աշխատում է մոտ 760 շահառուների հետ՝ փախստականներ, ապաստան հայցողներ, փախստականի հատուկ իրավիճակում հայտնված, տեղահանված ու կոնֆլիկտից տուժած անձինք, ինչպես նաև տեղացիներ Երևանում, Չարենցավանում ու Արարատի մարզի Դարբնիկ համայնքում:

Ծրագիրն ունի երկու հիմնական նպատակ՝ զբաղվածության ապահովում և եկամուտ ավելացնող նախաձեռնությունների իրականացում:

Ծրագրի շրջանակներում՝

- Երևանում հիմնադրվել է ձեռներեցության աջակցության միավոր, որը կազմակերպում է անհրաժեշտ վերապատրաստումներ:

- Մրցութային կարգով ընտրված 40 սկսնակ ձեռներեցներ և փոքր ու միջին ձեռնարկությունների ներկայացուցիչներ ծանոթացել են նորարարությանն ու ձեռներեցությանը վերաբերող թեմաներին:
- Ծրագրի առաջին տարվա ընթացքում 27 ձեռներեց ստացել է միջինում 1.5 միլիոն դրամ դրամաշնորհ՝ բիզնես գործունեություն իրականացնելու կամ ընդլայնելու համար. նրանց 50%-ը փախստականներ և տեղահանվածներ են:

Ավելի քան 150 տեղահանված/ փախստական մասնագիտական կրթության հնարավորություն է ստացել, որոնց մի մասը սեփական գործն է նախաձեռնել, իսկ շուրջ 40 մարդ տեղավորվել է աշխատանքի:

## Երեխաների և ընտանիքների աջակցության ծառայություններ

Առավել խոցելի ընտանիքների երեխաները հաճախ չեն ստանում նվազագույն անհրաժեշտ սնունդ ու խնամք, նրանց լիարժեք զարգացումն ու դպրոցական ծրագրի յուրացումը անտեսված են: Վորլդ Վիժն Հայաստանը Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի, Արագածոտնի և Սյունիքի 10 համայնքներում ստեղծել է համայնքային ցերեկային կենտրոններ և երկարօրյա խմբակներ, որոնց ծառայություններից արդեն օգտվում է 4000 երեխա:

**<u>Երկարօրյա խմբակներ</u>**. 2019 թ.-ից Հայաստանի 40 գյուղական դպրոցների 6-15 տարեկան շուրջ 2000 դպրոցահասակ երեխա հաճախում է երկարօրյա խմբակներ: Այստեղ երեխաները

- ✓ ստանում են առողջ սնունդ,
- ✓ կատարում են տնային առաջադրանքները,
- ✓ մասնակցում են կյանքի հմտությունների դասերին:
- ✓ Ծնողների համար ծնողավարության դասընթացներ են կազմակերպվում:

## Բռնությունը փոխարինենք սիրով հանրային արշավ

Նպատակ ունենալով նպաստել Հայաստանում երեխայի հանդեպ բռնության կանխարգելմանը, վերացմանը և բռնության ենթարկված երեխայի համակողմանի վերականգնմանը՝ Վորլդ Վիժն Հայաստանը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչությունը, ՍՕՍ մանկական գյուղեր-Հայաստանը, Հայաստանի մանուկներ հիմնադրամը, Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, Երեխաների պաշտպանության ցանցը, «Ընտանիք և համայնք» ՀԿ, Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոնը», Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, միավորեցին իրենց ջանքերը՝ իրականացնելու «Բռնությունը փոխարինենք սիրով » երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հնգամյա հանրային արշավը, որը համաշխարհային նույնաբովանդակ արշավի հայաստանյան նախաձեռնությունն է: Արշավի շրջանակներում ստեղծվել է http://mankutyun.am/ կայքը, «Բռնությունը փոխարինենք սիրով» ֆեյսբուքյան էջը: Կայքում տեղ են գտել ավելին քան 40 կրթական նյութեր, որոնք կարող են ծառայել որպես տեղեկատվական ռեսուրս ծնողների, երեխաների, ուսուցիչների ու այլ շահագրգիռ կառույցների ու անհատների համար: Ֆեյսբության էջի միջոցով տարածվում են բռնությանն առնչվող նյութեր, զեկույցներ, ինչպես նաև հարցադրումներ, որոնք խրախուսում են դրական ծնողավարման վերաբերյալ քննարկումների ծավալումը: Արշավը նախաձեռնել է կամ մասնակցություն է ցուցաբերել թեմատիկ մի շարք ասուլիսներ, այդ թվում՝ ընտանեկան բռնության, երեխաների մասնակցությունը հավաքներին, ՁԼՄ-ներում երեխաների իրավունքների և արժանապատվության ոտնահարման վերաբերյալ:

## ՎԵԲ ԿԱՅՔ

Վորլդ Վիժնի ծրագրերի մասին մանրամասն կազմակերպության կայքում՝
https://www.wvi.org/hy/armenia